ՆՈՐ-ԴԱՐ

№ 185 ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հ̇ասաւթ 5 Նոյեմբերի 1888 Հ̇ասաւթ 5 Նոյեմբերի ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 185

Տարեկան 10 րուբլի, վեց ամսով՝ 6 րուբլի, երեք ամսով՝ 3 ր. 50 կ., ամսով՝ 1 ր. 50 կ., հատ մ՚ 5 կոպէկ։
Պաշտօնապէս զբաղած են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Нор-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի սուն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն ժամերում։
Յայտարարութիւնների գնաւճարը 2 կ., բնկերացների համար կրկնապատկի։

ՀԱՅԱՀԱՅԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՑ ԹԵՐԹ

Թիֆլիսում

ԱՌԱՋԻԿԱՑ 1889 ԹՈՒԱԿԱՆԻՆ

(Վեցերորդ տարի)

Կը հրատարակուի նոյն ձեւով և ծրագրով

Խմբագրութիւնը կ՚ստանայ և սեպհական հեռագիրներ

Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպ.

Եւրոպայի, Թիւրքիայի, Ամերիկայի և այլ հեռաւոր երկիրների բաժանորդները վճարում են տարեկան 30 ֆրանկ։

Բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։

Թիֆլիսում բաժանորդ են գրւում հետեւեալ «Նոր-Դար»-ի խմբագրատները։

Խմբագրատունը գտնւում է Բարօնսկայա փողոցում, պօստ-հեռագրատան դէմ, տուն № 12.

Օտար քաղաքներից գիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты «НОРЪ-ДАРЪ» կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր-հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

Иногородные адресуютъ свои требованія: ТИФЛИСЪ, ВЪ РЕДАКЦІЮ «НОРЪ-ДАРЪ».

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ընդհանրապէս Թիւրքիայի և մասնաւորապէս Կ. Պոլսի, նոյնպէս և Պարսկաստանի «Նոր-Դար»-ի բաժանորդները կամ ընդունք, որոնք կը կամենային առաջիկայ 1889-ի Յունուարին «Նոր-Դար»-ը ստանալ, թող չուշանան բաժանորդ գրուել, որպէս զի առաջիկայ յունվարի 1-ից կարողանան ստանալ «Նոր-Դար»-ի համարները։ Բաժանորդ չգրուողը չպէտք է այնուհետեւ նեղանայ խմբագրութիւնից, եթէ համարները չստանայ։ Այս առթիւ խնդրում ենք արտասահմանի այն բաժանորդներից, որոնք դեռ չեն վճարել իրենց բաժանորդագինը, բարեհաճեն ուղարկել առանց յետաձգութեան։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող. — Մեր լուսաւորութեան գործի դրութիւնը և այդ առթիւ պետդութիւնները։

Քրոնիկոն.—Լուրեր։ Հոկտ. 18-ին խորտակուած կայսեր. գնացքի պատկեր։ Նամակ խմբագրին։

Թղթակցութիւններ.—Կեօրիս։ Նամակ Թիւրքիայից։—Կ. Պոլիս։

Քաղաքական. — Քաղաքական լուրեր։

Խառն լուրեր։

Նոր-Գաբի հեռագիրներ.—Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 4 Նոյեմբերի 1888.

ՄԵՐ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՅԴ ԱՌԹԻՒ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

IV

Բարենպատակ ընկերութիւնները մեր ազգի մէջ շատ չեն, իսկ խոշորը գրամագլխով և ոչ մի հատ ունինք. իսկ եղածների դրութիւնն այնքան էլ նախանձելի չէ. նրանց հեռւողը պէտք է որ շատ ցաւալի եզրակացութեան հասնէ։ Իւրաքանչիւր առաջ գիմող ազգի մէջ մի օրէնք հաստատութիւն, ընդունենք, մի օրէնք ընկերութիւն իւր գոյութեան սկզբում դեռ սահմանափակ էլինում թէ իւր գրամագլխով, թէ իւր անդամների թուով և թէ իւր գործունէութեամբ. ժամանակի հետ նրա գրամագլուխը մեծանում է, եկամուտներն աւելանում են, նրա անդամների թիւը ստուարանում է, նրա գործունէութեան շրջանը ընդարձակւում է։ Մեր մէջ բարենպատակ ընկերութիւնները լոլորովին ուրիշ պատկեր են ներկայացնում. մեր ընկերութիւնները կամ մնում են միևնոյն դրութեան մէջ՝ ինչ դրութեան մէջ էին դրանք իրենց գոյութեան առաջին օրը կամ, որ աւելի ուշադրութեան արժանի է, գնալով ընկնում են. գրամագլուխ եթէ ունեն, պակասում է, անդամների թիւը գգալի կերպով նուազում է, գործունէութեան շրջանը աւելի սահմանափակւում է և ընկնում է մի տեսակ ամեն կեանք, եռանդ և բարի գործ մեռցնող, անշարժութեան մէջ։

Մեր ունեցած բարենպատակ ընկերութիւնների մէջ եթէ, համեմատաբար, լաւերը կան, դրանց պէտք է որոնել Թիֆլիսից դուրս և ոչ թէ Թիֆլիսում։

Չենք ուզում այդ երևոյթների պատճառները որոնել և նրանց մասին խօսել այժմ. մենք ուզում ենք միայն տխուր և մերկ ճշմարտութիւնն արձանագրել. մի ժողովրդի լուսաւորութեան գործը կանոնաւոր զարգացման մէջ չէ, եթէ նրան նպաստելու կոչուած միջոցները այդ տեսակ տարօրինակ և ողորմելի դրութեան մէջ են։

Աշկարայ է, որ այդ բարենպատակ ընկերութիւնները, ընդհանրապէս առած, արհեստական միջոցներով և միմիայն արհեստական միջոցներով գոյութիւն ունին։

Չենք ուզում այդ երևոյթների պատճառները որոնել, ինչպէս վերև ասացինք, այլապէս մենք պէտք է այս առաջնորդողի սկզբից որոշած շրջանակից դուրս գայինք, այն ինչ մեր նպատակն է այս անգամ միմիայն իրողութիւններն արձանագրել։

Մի բան չենք կարող չնկատել. մեր բոլոր բարենպատակ ընկերութիւնների ընդհանուր յատկանիշն այն է, որ գրանք վայելում են հասարակութեան, հայ ժողովրդի անտարբերութիւնը։ Մի ուրիշ խոշոր և միմիայն գուցէ մեր մէջ նկատելի երևոյթն այն է, որ ուրիշ ազգերի մէջ իւրաքանչիւր բարենպատակ ընկերութեան թէ հասատատութեան նպաստողները, աւելի եռանդով նրանց համար աշխատողները լինում են նրանք, որոնք բարձրագոյն կրթութիւն են ստացել, վերջապէս կրթութիւն են ստացել, բարենպատակ հաստատութիւններից օգնութիւն են ստացել իւր ժամանակին — մեր մէջ, ընդհակառակն, աւելի բարձրագոյն ուսում ստացողները, բարենպատակ հաստատութիւններից թոշակներ ստացողները կեանք որ մրտնում են, իրենց բոլորովին հեռու են պահում այդ տեսակ և ընդհանրապէս իւրաքանչիւր ազգաշահ, հանրօգուտ գործերից. կեանքի մէջ նիւթականապէս առատօրէն շահուելով, մի կոպէկ անգամ մաս չեն հանում դրանք ազգ. հանրօգուտ գործերի համար, և եթէ ազգային գործին մօտենում են, այդ լինում է նիւթապէս օգտուելու կամ փառամոլութեան համար։

Յոյներն օրինակ, քանի անկիրթ են, խեղճ են, գուրկ ուսումից և գիտութիւնից և նիւթական միջոցներից, ընդհանրապէս հեռու են ազգ. բարենպատակ գործերից և օժտուած են լինում վատ յատկութիւններով. իսկ երբ նրանք, յոյները կրթութիւն, ուսում են ստանում, միջոցների տէր են դառնում, այնուհետեւ մեծ եռանդով մասնակցում են ազգային, հանրաշահ գործերին թէ գործով և թէ նիւթական միջոցներով։ Այն ինչ հայերի մէջ հակառակ երևոյթին ենք հանդիպում։

Այդ պատճառով զարմանք չէ, որ մեր ինտելլիգենտ—բժիշկները, չնայելով իրենց մինչև երկինքը աղաղակող «եանց»-երին, ամեն բանի վրայ մտածում են, բայց ոչ այն բանի վրայ, որ կարող էր նպաստել մեր ազգ. լուսաւորութեան գործին։

ՔՐՈՆԻԿՈՆ

Ուրբաթ, հոկտեմբերի 4-ին, նոյնպէս չստացանք Ռուսիայի և Եւրոպայի պօստը։ Ճանապարհը փակուածէ Ռազմա-վիրական Ճանապարհի վրայ լեռներից գլորուող ձեան հիւսերից և բուքերից։

—

Մեզ հաղորդում են, որ հանգուցեալ Բելոլեռեանցի դպրոցը պահող նրա նախկին աշակերտ պ. Օրբէլեանը, հանգուցեալի անունով մի ստիպենդիատ է հաստատել, որպէս զի մինչ մի աշակերտ պահուի հանգուցեալի անունով, որքան ժամանակ դպրոցը գոյութիւն կունենայ։

—

Եգիպտոսի Ալէքսանդրիա քաղաքում, ինչպէս հաղորդել էինք, պետի հրատարակուի «Նեղոս» անունով հայերէն մի նոր շաբաթաթերթ։ Ընթերցողին մի գաղափար տալու համար գրա մասին, առաջենք բերում «Նեղոսի» խմբագրութեան յայտարարութիւնից հետեւեալ կտորները.

«Նեղոս» լրագրոյն նպատակն պիտի լինի Ազգային յառաջադիմութեան համար իւրովհան ծառայել և լինել յօդ Եղբայրսիրութեան և յարաբերութեան ընդ մէջ Օտար և Եգիպտահայ Գաղթականութեան։

Սոյն նպատակին հասնելու համար պիտի աշխատի, գրէ, քարոզէ և խրախուսէ այն ամեն միջոցները՝ գորս օգտակար համարի, իսկ հակառակ պարագային մէջ՝ (ըստ ներելոյ պատշաճի օրինաց լրագրութեան), պիտի հարուածէ և հալածէ այն ամեն գործիչները, գորս կատարեալ համոզմամբ վնասակար գտնէ Ազգային կեանքին։

Խմբագրութիւնս քաջ համոզուած լինելով թէ՝ իւրաքանչիւր հպատակ ազգի համար զարգացման և յառաջադիմութեան միակ միջոցն է իւր կառավարութեան բարի կամեցողութիւնն, ուստի և միշտ պիտի ձգնի հետեւիլ իւր դաւանած ուղղութեան. բայց միանգամայն առանց մարդահաճութեան և այլ սին նկատմանց՝ ի հարկին անաչառապէս և խիստապէս մատնանիշ ընել ամեն ամէն զեղծումներն, որոնք տեղի կունենան հակառակ արդարասէր կամաց տիրող կառավարութեան։

«Նեղոս» լրագիրը պիտի հրատարակուի ամէն Շորեքշաբթի օրեր.

Պիտի պարունակէ Ազգային կեանց վրայ տեսութիւն և տեղեկութիւն. Աստաքին և Տեղական լուրեր. նոյնպէս Զաւեշտական, Բանասիրական և այլ օգտակար ցօղուած և գրութիւն։

Խմբագրութիւնս իւր լրագրոյն մէջ սիրով կը հիւրընկալէ ամէն տեսակ գրութիւն որ լինի ընտիր, օգտակար և իւր նպատակին յարմար։

Սոյն լրագիրը հիմնուած է երից անձանց ընկերակցութեամբ և շարունակութիւնն ևս երաշխաւորեալ գանազան պայմաններով։

—

Նոյեմբերի 1-ին Թիֆլիսից ուղևորող ապրանքակիրը գնացքը Աւճալա և Մցխէթ կայարանների մէջ, երեկոեան 9½ ժամին, Ճանապարհի վրայ հանդիպում է մի փուրգոնի, որի մէջ մօտ 100 պուդ բեռ է լինում։ Կառքի Ճանապարհը, գնացքը մօտենալու միջոցին, բաց է լինում, չնայելով մեքենագէտի սուլելուն։ Գնացքը հասնում է և խփելով փուրգոնին, ձգում է նրան 200 սաժէն հեռու։ Կառքը բոլորովին չարդ ու փշուր է լինում. իսկ փուրգոնի ձիերն և կառավարն ազատւում են, տեղական ռուս թերթերի ասելով, թերթև վէրք ստանալով։

—

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ. — Համաձայն իւր խոստման՝ Թեմիս ս. առաջնորդ Սուքիաս եպիսկոպոսը կրկին այցելեց մեր քաղաքը։ Նորին Սրբազնութիւնը սեպտեմբերի 18-ին ս. Երրորդութեան եկեղեցում տեղիս յաջորդ Գեր. Յովսէփ վարդապետ Փիլոյեանին տուեց Ծայրագոյն վարդապետութիւն և գաւազան։ Սրբազանը իւր այդու քարոզով խրախուսեց Յովսէփ վարդապետին, որ համաձայն իւր կոչման հովուէ Քրիստոսի բանաւոր հօտը և սրտառուչ խօսքերով հասկացրեց ժողովրդին ծայրագունութեան նշանակութիւնը։ Նա յորդորից վարդապետին քարոզել շարունակ ժողովրդեան, իսկ ժողովրդին լսորհուրդ տուեց միայն լսել և կատարել հոգևորականների ասածը, նրանի թէ մեր ժողովուրդը այնքան լինքնահաւանութիւն ունենար, որ հետևէր հոգևորականների քարոզներին։ Բայց, խնդալէս, ևմէ քննելու լինինք մեր դրութիւնը, կը հիասթափուենք.—ժամանակաւոր կենդանի օրինակը աւելի է ազդում՝ քան դատարկ խօսքը։ Բայց դժբաղդութիւնն այն է, որ ոչ խօսքը կայ և ոչ գործը։ Ցաւանք, որ այսուհետև գէթ կարժանանանք եկեղեցու լսելու կենդանի խօսք լսելու և մխիթարուելու. բայց ասած է. «կարմիրը կովը իւր կալից չի գուրս գալ»... կարծես թէ սրբազան առաջնորդին վիճակուած է իւր հայրենիքում միշտ անախորժ և տգեղ երևոյթների հանդիպել։ Սրբազան առաջնորդին հրաւիրում են տեղիս «աղաներից» մինի տուն։ Բանից դուրս է գալիս, որ չնչին աղայի գատեր նշանագրութեան հանդէսը պիտի լինէր։ Բայց բանը նրանումն է, որ մէջտեղ չհասութիւն է եղել... ու ծնողները գիմում են սրբազան առաջնորդին խնդրելով լուծել այդ չհասութիւնը։ Սրբազանը մնում է շուարած և արդարը զայրութով նախատում ու դուրս է գալիս չնչին աղայի տնից։ Խնդրի նախկին անցքը... խնդրի կամեցել են հատուցումն ստանալ իրենց դիւրացած հիւրասիրութեան։

—

Նույնիսկ մեզ մոտ հանդիպում են ամառանոցներ, որոնց մասին տերերը կարող են ասել, որ նրանք ամառանոցներ չեն, այլ ամառանոցներ։ Ամառանոցներ, որոնք ամառանոցներ են միայն այն պատճառով, որ նրանց տերերը ամառանոցներ չունեն

նէ անարգ խօսքեր ես լսում կոպիտ ու կոշտ գիւղական այդ դատաւորից, քո այդ չնչին պարենիցդ քանիսն է կուլ տալիս այդ գիւղի իշխանը։ Մինչև տարուայ վերջը քանի՞ անգամ է ասում քեզ՝ «ախր, վարժապետ, մեր խոխեքը գալամագիրը լաւ չեն իմանում, երբէք ուզացի նամակ գրել տամ՝ կարաց ոչ...» կամ «ըսկի մեր խոխեքը «մայաթվայից» զատ չեն իմանում, ասօր մին գազազ էր եկել, խոխեքը կարացին օչ գաս հսկացնին...» Այդպիսս խօսում են այնպիսի ուսումնական պահպանները, որպիսին վերևը նկարագրեց իմ Թոյլ գրիչը։ Հարաշք են պահանջում այն ուսուցչից, որին, առանց կրօնական և աշխարհական երեսփոխանների պատգամաւորութիւն մը երթալով ի պատրիարքարան, առաջնորդեցին զն. Ամենապատուելին ի ժողովասրահն, որ ներս մտնելուն պէս ողջունելով զներկայս բազմեցաւ նախագահական Աթոռոյն վրայ։

Ազգ. ժողովոյ Ատենապետը բանախօսութիւն մը արտասանելով՝ շնորհաւորեց Ն. Ամենապատուելին ընտրութիւնը և խնդրեց, որ օրհնէ Հայ ազգն ու Օսմանեան վեհապետը, որմէ վերջ հանգոյն ժողովուրդը օտքի ելան և գոչեցուցին իրենց երեսները դէպի յԱրևելս. իսկոյն եկեղեցւոյն վարագոյրները բացուեցան և Նորընտրը Պատրիարքը ամենայն ջերմեռանդութեամբ արտասանեց իւր ուխտը հետևեալ կերպիւ.

Ուխտ.

Առաջի Աստուծոյ և ի ներկայութեան Ազգային ժողովոյս հրապարակաւ կուխտեմ հաւատարիմ մնալ Տէրութեան և Ազգիս և ճշմարտապէս հսկել Ազգային Սահմանադրութեան անթերի գործադրութեան։

Ցետ այս պատկառելի արարողութեան վարագոյրը գոցուեցաւ վերստին և խորէն պատրիարք դէպի ժողովուրդը դառնալով, արտասանեց իւր առաջին բանախօսութիւնը, յորում նախ իւր ընտրութիւնն յայտնելով և պատրիարքութիւն, թէ առ Ազգն և թէ առ կառավարութիւնն մեծ պատասխանատուութեանց և համարատուութեանց տակ մտած ըլլալը կը խոստովանէր. յետոյ իւր բոլորովին վանական կենաց մէջ տարած ըլլալովը, այսպիսի քաղաքական կեանքի մը երեն համար նոր և անծանօթ ըլլալը և թէ իւր այնչափ բարեյիշատակ նախորդներէն վերջ, սլեսի կըբնայ զԱզգն գոհացնել, այս մասին յուզման և սրտագողի մէջ ըլլալը և այլն խօսելով կը յաւելուր, որ բացի Օսմ. կառավարութենէն և Ազգէն՝ համարատուութիւն մնալ ունի առ Հայրապետն Ամենայն Հայոց, որոյ կ. Պոլսոյ փոխանորդն է. իւր պաշտօնին այսչափ ծանրութիւնն զգալով պահ մը կը հարցնէր ինքնին թէ՝ պիտի կրնա՞յ կատարել այս ամենը. սակայն յուսալով, որ անզօրները կրնարէ Աստուած և ընտրութեան մէջ Աստուծոյ մասը կայ, կեպրակացնէր, որ ինքն ալ պիտի յաջողի օժանդակութեամբ Ժողովրդեան աղօթից, և ձեռնտուութեամբ Ազգ. կրկնակի ժողովոյ։

Ցետոյ ըսաւ, որ «մեծ դժուարութիւնը մեր ներքին վիճակին մէջն է. 50—60 թեմեր անառաջնորդ, անհովիւ մնացած են, և որոց օգնութիւն հասցնել պիտի լինի առաջին գործս» անցաւ սահմանադրութեան և ըսաւ, որ այժ պիտի տայ անոր վերաքննութեանը և բարեփոխութեանը առանց հիմերուն դպչելու. վերջացուց իւր խօսքերը բարեմաղթութիւններ ընելով վասն կենաց վ. Կ. Սուլթանին։

Բոլոր երեսփոխանք և ժողովուրդք յոտնկայս Ամէններով ձայնակցեցան Ն. Ամենապատուելութեան։

Ցետոյ օտքի ելլալով Երուսաղիմայ պատրիարքը, պատմեց իւր ընտրութիւնն ու պատրիարքութեան անցեալը, և շնորհակալութիւն յայտնեց իւր կրկնակի ընտրութեանց համար. նաև շնորհակալ եղաւ վանական եպիսկոպոսի մը երեն յաջորդ ըլլալուն, որ գիտնալով վանուց պիտոյքը պիտի օգնէ երեն Երուսաղիմայ գործոց մէջ. նաև աւետեց, որ ի մօտոյ պիտի կարգադրէ Երուսաղիմայ մեծ պարտուց խնդիրը և մատուցանելով իւր հրաժեշտի ողջոյնը, այսպէս ըսաւ. «Այժմ, ըստ աւանդական վաղեմի սովորութեան, ս. Հայր, Աստուծոյ և Ազգին կողմանէ կուտամ Ձեզ այս գաւազանը՝ որուն տակ շատ փուշեր, շատ նեղութիւններ կան, բայց դուք իմաստուն էք և գիտէք իմաստութեամբ գործածել զայն»։ ապարտեց իւր խօսքերն Ց. պատրիարք Սազմոսի այս խօսքով. «Ընդէ՞ր տրտում ես անձն իմ և այլն» և դառնալով առ Տ. Խորէն պատրիարք, առաւ ա ս ա ն պատրիարքական ձեռքէն և յանձնեց Ն. Ամենապատուելութեան և երկոքին պատրիարքունք ողջագուրեցին զիրար։ Ապա Նուբեան էֆէնտին մէկ բանախօսութեանը վրայ շնորհակալեաց քուէ տուաւ Ժողովը Ց. պատրիարքին, որմէ վերջ կարդացուեցաւ պրս. տեղապահին հրաժարագիրը, որոյ ևս շնորհակալեաց քուէ տուաւ Ժողովը. նոյնպէս Նիկոմիդիոյ ս. Առաջնորդն և Ժողովուրդն ևս պատուեցաւ Ազգ. Ժողովոյ քուէներով և նիստը վերակացաւ ժամը 6-ին։

Ամեն. պատրիարք Հօր մը ո՛ր է կայս. պալատ երթալը դեռ յայտնի չէ։ Կիլիկիոյ Վեհ. կաթողիկոսն, Պուլսայու Գեր. Առաջնորդն և այլ բարձրաստիճան եկեղեցականք հեռագրաշնորհաւորեցին Ն. Ամենապատուելութեան Խորէն Արքեպիսկոպոս Ազգեանի պատրիարքական ընտրութիւնը. Զմիւռնիոյ նախկին առաջնորդ Ամեն. Մելքիսեդեկ Տրապզան Մուրադեանց, ընկերակցութեամբ կրօնական դասուն՝ ի պատրիարքարան գալով, շնորհաւորեց Ամեն. ս. պատրիարք Հայրը, որ յոյժ մեծարանօք ընդունեց զն. Ամենապատուելութիւն։

—Երուսաղիմայ պարտքը վճարելու համար գաւառացի Ազգայինք իրենց Ձինուորական տրոց հետ երեք տարի 3-ական զիշ վճարած էին. և այդ դրամը կը գտնուէր Ելևմտական նախարարութեան մօտ. այդ այս օրերս 31 հազար Օսմ. լիրայի հինվանդինը, (փոխ. գիր.) առնուած են նոյն նախարարութենէն յանուն ս. Երուսաղիմայ, որք պիտի վճարուին Հայէպի, Երուսաղիմայ և Պէյրութի կայս. սնտուկներէն։ Որպէս կը տեսնուի, Երուսաղիմայ պարտքը գրեթէ վճարուեցաւ՝ի չնորհս վեհ. Սուլթանին և ժողովրդեան տուած եռամեայ երիք ղրուշին (որ այժմ մշտնջենաւոր 9 ղրշ. եղաւ զինուորական տրոց վրայ 1/3 յաւելմամբ). կը յուսամ, որ այսուհետև ասանկ փորձանք մ՚ալ չեն բերիր ազգին գլխուն, որ քիչ մնաց վանքն հիմն ի վայր պիտի տապալէր։

Կայս. Մելքեյէկ վարժապետը, որ քաղաքական պաշտօնեայներ կը հասցնէ, որպէս գայիմմագամ, (գաւառներու կառավարիչ) կառավարիչ, կուսակալ և այլն և այլն, մինչև ցարդ միմիայն տաճկ. և գաղ. լեզուաւ կրլլային դասախօսութիւնք. արդ վեհ. Սուլթանին հրամանին համեմատ այսուհետև այդ վարժարանին թէ նախակրթական և թէ ուսումնական ճիւղերուն մէջ անխտիր պիտի դասախօսուին հայերէն և յունարէն լեզուները, որոց համար ամսական 20 ոսկի յատկացուած է դասատուաց ամսավճար։ դասատուներն ընտրուած են և դասախօսութիւնք կըսկսուին յառաջիկայ հրկուշաբթի. այս չնորհ յատկապէս ժողովրդեան ամեն դասուն օգտակար ըլլալու համար եղած է Ն. Վեհափառութենէն, ըստ որում երկրին շատ տեղերը ժողովուրդը կամ հայերէն և կամ յունարէն գիտնալով, տաճկերէն լաւ չեն գիտեր և չեն կրնար իրենց մխաքը ուզածնուն պէս բացատրել. յայտնի է թէ այս կայս. շնորհաց վրայ իրենց լեզուաւ խօսող պաշտօնեայներ տեսնելով քանի՛ սիրով պիտի կատարին նոցա հետ։

Քաղունի

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

ՍԵՐԲԻԱ. — «Correspondence de L'Est»-ի Թղթակիցն այցելել է պ. Րիստիչին՝ սահմանադրութեան վերաքննութեան մասին Միլան Թագաւորի հրատարակած յայտարարութեան օրը։ Պ. Րիստիչն ասում է, որ Թագաւորի տրած քայլը խիստ Ճարտար քայլ է։ Այժմ արդէն Սերբիայում հազիւ Թէ մտածեն Թագաւորի ապահարզանի մասին, որովհետև քաղաքական կուսակցութիւնները բացառապէս կը զբաղուին նոր սահմանադրութեան խնդրով, իսկ ինչ վերաբերում է նոր սահմանադրութեան բնաւորութեան, կարելի չէ նրան որոշել այժմ։ Մինչև անգամ կարելի չէ ասել, Թէ ինչ սկզբունքներ պիտի պաշտպանէ ազատամիտ կուսակցութիւնը Թագաւորի կազմած յանձնաժողովի մէջ։ Սահմանադրութիւնը չպէտք է մասնաւոր կուսակցութեան գործ լինի, այլ ամբողջ երկիրը պէտք է մասնակցի նրան։ Յանձնաժողովին մասնակցելու կոչուած անձերը պատկանում են քաղաքական զանազան կուսակցութիւնների, զանազան գաղափարների և անհամար շահերի։ Սահմանագիւռորը նրանց մէջ կայանալիք համաձայնութիւնն է։ Սերբիայի բոլոր կուսակցութիւններն էլ աւելի լայն սահմանադրութիւն են ցանկանում, քան 1869 թ. յունիսի 20-ին տրուած սահմանադրութիւնը։ Բոլոր կուսակցութիւններն էլ ցանկանում են, որ ընդարձակուին սերբ քաղաքացու իրաւունքները և նրանք ապահովուին։

Րիստիչը համոզուած է, որ բոլոր կուսակցութիւնները էլ կը համաձայնուին մի ընդրի վերաբերմամբ ևս,—այն է ընտրելիներիայի մասնակցութիւնը ազգային ներկայացուցչութեան մէջ։ «1868 թուին մեծ սկզբունքներ իմ ներկայացրած սահմանադրութեան նախագծի մէջ, ասում է Րիստիչը, այդ ընդրին էլ էր չոշափուած. բայց այն ժողովը փոխեց իմ նախագիծս՝ ոչ միայն պաշտօնեաներին, այլ և պաշտօնից դուրս եղողներին, նոյնպէս և փաստաբաններին արգելելով մասնակցել ընտրութիւններին։ Այդ որոշումը հարկաւոր է փոխել։ Իսկ սենատ հաստատելու և կուսակցութիւնների ընտրութեան մասին, անկասկած, համաձայնութիւն կը կայանայ։ Առհասարակ սահմանադրութեան վերաքննութեան համար Թագաւորի բռնած եղանակը շատ լաւ է,—դրանով յանձնաժողովի մէջ ո՛ և է կուսակցութեան գերակշռութիւնը ոչնչացուում է»։

ԳՐՄԱՆԻԱ. —Ֆրիդրիխ III կայսրի յիշատակարանի հրատարակութեան առթիւ սկսուած քննութիւնները դեռ չեն վերջացել և էլի շարունակ զբաղեցնում են գերմանացիների մտքերը, ինչպէս յայտնի է, յիշատակարանի հրատարակութեան համար դատաստանի ենթարկուեց պրօֆէսսոր Գէֆկէնը, որ այժմ գտնուում է Բերլինի Մօաբիտեան բանտում. նա ասում են մեծ յարգ ունի Զուիցերիայում, ուր գտնուում են ներկայումս և նրա աղջկերները։ Այդ առթիւ լուր էր տարածուած, Թէ Բերլինի ոստիկանութիւնը պահանջել է իրը Թէ, որ նրա աղջկերանց քննութեան ենթարկեն։ «Indépendance Belge» Թերթը հերքելով այդ լուրը, հաղորդում է, որ Բազէլի ոստիկանութիւնը բաւօն Թոզէնբախից պահանջել է, որ ոստիկանութեան յանձնէ Գէֆկէնից ստացած իրը բոլոր նամակներն և Թղթերը, որին Թօզէնբախը պատասխանել է, Թէ Թող ոստիկանութիւնը ինքը գայ և առնէ եթէ հարկաւոր է համարում։ Ցերեկ, մի քիչ յետոյ ոստիկանական գործակալները գնում են բաւօնի ամրոցը և գրաւում են Գէֆկէնի բոլոր նամակները և Թղթերը, նոյնպէս և Ֆրիդրիխ III կայսրի նամակները, որ ուղարկուած են եղել Թօզէնբախին։

—Սակայն Գերմանիայի ուշադրութիւնն նորերումս գարձել է Վիւրտէմբէրգեան Կարլոս Թագաւորի վրայ, որի հիւանդութեան մասին զանազան լուրեր են շրջում։ Թէև Վիւրտէմբէրգի Թագաւորութիւնը Գերմանիայի մասն է կազմում, բայց կարծուում է, որ Կարլոս Թագաւորը աշխատում է, քանի կարելի է, խոչընդոտ լինել Գերմանիայի զարգացման և միութեան կապերի ամրացման, մինչդեռ Վիւրտէմբէրգի ժողովուրդը ամրողջապէս նուիրուած է գերմանական միութեան և կայսրին։ Պատմում են, որ Կարլոս Թագաւորը նոյն իսկ հակառակ ցոյցեր է արել Վիլհելմ կայսրին. այդ շատ ճնշիչ տպաւորութիւն է գործել գերմանացիների վրայ։ Թագաւորը իւր վատառողջութեան պատճառով ապրում է Ֆրանսիայում, Նեցցայում և ընկնելով մի քանի ամերիկացիների ազդեցութեան տակ, երկիրը կառավարում է նրանց խորհրդով։ Այդ բանը դժգոհութիւն է պատճառում նրա մինիստրներին, որոնք սպառնում են հրաժարական տալ։ Այս բոլոր խնդիրների վրայ առանձնապէս ուշադրութիւն գարձրեց «Neueste Nachrichten» Թերթը, որ Թագաւորի մասին խիստ յօդուածք գրելուն համար կառավարութենից գրաւուեց։ Վիւրտէմբէրգի ժողովրդի երկիւղն առաւել մեծ է այն պատճառով, որ լուրերն նուիրուած լինելով Պրուսիային, ներկայ կարլոս Թագաւորի անզաւակ որդուց յետոյ, գահը պիտի ընկնի նոյն ցեղի կաթոլիկ մասի ձեռքը, որ նոյնպէս բարեհամ չէ Պրուսիային։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Երկաթուղիների խորատակումը 46 տարուայ ընթացքում. —Հոկտեմբերի 17-ի փորձանքի նման դէպքեր շատ չեն պատահում առհասարակ։ Հաշուած է, որ վերջին 46 տարուայ ընթացքում Եւրոպայում (առանց Ռուսիան հաշուելու), Ասիայում, Ամերիկայում և Աւստրալիայում պատահել է երկաթուղային գնացքների խորտակման 32 դէպք, որոնցից խորտակման 21 դէպքում մարդկանց զոհերի թիւը աւելի է եղել հոկտեմբերի 17-ի դէպքի զոհերի Թուից։ Այսպէս օրինակ, գնացքների խորտակման միջոցին զոհ են գնացել

1842 թ. Ֆրանսիայում — այրուած		50 հ.
1852 թ. Միաց.-Նահանգ.	սպանուած	46 հ.
	վիրաւոր	30 հ.
1854 թ. Կանադայում — սպան.		40 հ.
1856 թ. Միաց.-Նահ. — այրուած		62 հ.
1857 թ. Կանադայում — այր.		60 հ.
1859 թ. Միաց.-Նահանգ.	սպանուած	30 հ.
	վիրաւոր	40 հ.
1861 թ. Անգլիայում	սպանուած	23 հ.
	վիրաւոր	100 հ.
1862 թ. Միաց.-Նահանգ.	սպանուած	50 հ.
	վիրաւոր	60 հ.
1867 թ. Միաց.-Նահ. — այրուած		40 հ.
1868 թ. Միաց.-Նահանգ.	սպանուած	20 հ.
	վիրաւոր	60 հ.
1868 թ. Անգլիայում — այրուած		38 հ.
1868 թ. Աւստրիայում	սպանուած	21 հ.
	վիրաւոր	60 հ.
1871 թ. Միաց.-Նահանգ.	սպանուած	30 հ.
	վիրաւոր	50 հ.
1874 թ. Անգլիայում	սպանուած	24 հ.
	վիրաւոր	40 հ.

1874 թ. Անգլիայում — խեղդուած 34 հ.
1876 թ. Միաց.-Նահ. — սպան. 25 հ.
1876 թ. Միաց.-Նահ. — սպան. 80 հ.
1880 թ. Անգլիայում — խեղդ. 200 հ.
1881 թ. Միաց.-Նահ. — սպան. 40 հ.
1882 թ. Գերմանիայում — սպանուած 64 հ., վիրաւորը 225 հ.
1883 թ. Գերմանիայում — սպանուած 39 հ., վիրաւորը 20 հ.

Իսկ ատելի պակաս զոհերը եղել են երկաթուղային գնացքների խորտակման հետևեալ 11 դէպքերում.

1857 թ. Անգլիայում — սպան. 11 հ.
1859 թ. Միաց.-Նահ. — սպան. 13 հ.
1859 թ. Միաց.-Նահ. — սպան. 14 հ.
1862 թ. Անգլիայում — սպան. 15 հ.
1867 թ. Անգլիայում — սպան. 15 հ.
1869 թ. Միաց.-Նահ. — այր. 10 հ.
1871 թ. Միաց.-Նահանգ. — սպանուած 15 հ., վիրաւոր 20 հ.
1871 թ. Միաց.-Նահ. — այր. 21 հ.
1872 թ. Անգլիայում — սպան. 19 հ.
1875 թ. Անգլիայում — սպան. 13 հ.
1885 թ. Աւստրալիայում — սպանուած 12 հ., վիրաւոր 28 հ.

Այսպիսով ուրեմն, 40 տարուայ ընթացքում երկաթուղային խորտակման դէպքեր պատահել են՝

Միացեալ-Նահանգներում 25 անգամ, որի մէջ սպանուած են 373 հ., վիրաւորուած են 260 հ., այրուած են 133 հոգի, ընդամենը վնասուած են 766 հոգի։

Անգլիայում պատահել է 10 դէպք, որի մէջ սպանուած են 120 հոգի, վիրաւորուած են 140 հոգի, այրուած են 38 հ. և խեղդուած են 234 հոգի։

Կանադայում պատահել է 2 դէպք, որի մէջ սպանուած 103 հոգի։

Գերմանիայում 2 դէպք, որի մէջ սպանուած 103 հոգի, վիրաւորուած 245 հոգի։

Ֆրանսիայում 1 դէպք, որի մէջ սպանուած 50 հոգի։

Աւստրալիայում 1 դէպք, որի մէջ սպանուած 12 հոգի և վիրաւորուած 28 հոգի։ Իսկ ընդհանուր գումարը 46 տարուայ ընթացքում յիշեալ պետութիւնների մէջ պատահած գնացքների խորտակման 32 դէպքերի մէջ սպանուած—711 հոգի, վիրաւորուած—673 հոգի, այրուած—354 հոգի և խեղդուած—234 հոգի, ընդամենը վնասուած են 1972 հոգի։

*

Վերևում առաջ բերուած ցուցակից ընթերցողը պիտի տեսնէ, որ ամենից ատելի խորտակում պատահել է Միացեալ-Նահանգներում և Անգլիայում, Դրա պատճառն այն է, որ ոչ մի տեղ երկաթուղիները այնքան տարածուած չեն ինչքան այդ երկու պետութիւնների մէջ։ Բացի այդ, յիշեալ պետութիւնների մէջ երկաթուղիները սովորաբար ամեն մի ժամում անցնում են 115—120 վերստ և նոյն իսկ Ֆրանսիայում մի ժամուայ մէջ 100 վերստ տարածութիւն գնալը սովորական բան է, իսկ Պարսկից Օվկեան գնացող երկաթուղին մինչև անգամ 115 վերստ է գնում մի ժամում, այն ինչ Ռուսիայում դեռ սովորական գնացքները հազիւ 40 վերստ են ընթանում և այն էլ միայն Նիկոլայեվսկի և Վարշաւեան ճանապարհների վրայ։ Իսկ հոկտեմբերի 17-ի Արքայական գնացքը գնում էր, որպէս արտակարգ գնացք, ժամը 64 վերստ՝ ինչպէս այդ հաղորդում է «Прав. Вѣст.»-ը։

*

Արքայական գնացքի խորտակման մէջ սպանուած է 21 հոգի, իսկ վիրաւորուած՝ 37 հոգի։

Բիչէր-Ստօու.—Մօտերքս, երկարատև և ծանր հիւանդութիւնից յետոյ վախճանեցաւ աշխարհահռչակ ամերիկացի կին գրող Հարրիէտ Բիչէր Ստօուն։ Նրա գրուածքների հայ հասարակութեան յայտնի է «Թովմաս եղբօր տնակը», որ ամբողջապէս հայերէն թարգմանուած է Թիւրքիայում, իսկ համառօտը թարգմանուած է և մեզանում։ Բացի դրանից, նա ունի գրած «Երէկուայ ամուսինը», «Հարաւային նահանգների կեանքը», «Օլտօունեան հին բնակիչները» և «Լէդի Բայրընի իսկական կեանքի պատմութիւնը», որոնք դեռ հայերէն չկան թարգմանուած ծրագրում, իսկ Թիւրքիայում ևս թարգմանուած եղածը յայտնի չէ մեզ։

***

Բնական դերասանները.—Նիւեորկի թատրոններից մէնում խաղում են մի մեղմօդրամա—գողերի մասնակցութեամբ։ Այդ գողերը մեծ ճարպիկութեամբ թալանում են փողի արկղը, ինչպէս որ պիէսի մէջ պատահանւում է։ այդ դերասանները 8 անգամ եղել են բանտում։ Թէև ամեն մի ներկայացման համար նոր արկղ է հարկաւոր լինում գնել, որ այդիւղների բազմութիւնը մէջտեղ է տալիս թատրոնի տիրոջը իւր վնասը ծածկելու։ Սակայն այդ բնական դերասանների ճարպիկութիւնը մէկ վախի մէջ է պահում թատրոնի արտօնատէրերին, որոնք երկիւղ են կրում, թէ մի գուցէ իրենց գանձարանն ևս ենթարկուի այդ դերասանների ճարպիկութեան, ուստի ամէն անգամ առանձին պահապաններ են պահում իրենց գանձարանների մօտ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԴՈՐՏԱԿԱՒԱՐՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 4 նոյեմբերի։ — Ֆինլանդիայի մեծ իշխանութեան մինիստրի օգնական պետական քարտուղար գեներալ Երմոլոֆը նշանակուած է Ֆինլանդական մեծ իշխանութեան մինիստր-տրպետական-քարտուղար։

Պետերբուրգի առևտրական դատարանը Ֆեօդոր Ովսիաննիկովին ճանաչեց անկարող պարտապան։ Պարտքը $3^1/_2$ միլիոնից աւելի է։

Ֆրանսիական «Matin» թերթի այն յօդուածի վերաբերմամբ, որ իբրև թէ 1879 թուին Ռուսիան Ֆրանսիային առաջարկել է դաշն կապել, «Journal de St.-Pétersbourg»-ը նկատում է, որ որոշեալ նպատակով տարածուող լուրերին էլ սահման կայ։ Ռուսիան, ի հարկէ, ցանկանում է, որ Ֆրանսիան ստանայ Եւրոպայում իրաւամբ ունեցած ազդեցութիւնը, որ անհրաժեշտ է եւրոպական դրութեան հաւասարակշռութեան համար, բայց համոզուած է, որ խաղաղութեան պահպանութիւնը համապատասխանում է երկու պետութիւնների շահերին։ «Matin»-ի տարածած լուրերը միայն վնասում են գործին, որին նա ուզում է ծառայել։

ՉՈՐՉՈՅ.—Իսահակ խանի Աւազանական Թուրքեստանում լինելու մասին լուրը դեռ չէ հաստատուում։

Խմբագիր-Հրատարակիչ

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

PHOSPHATE DE FER
De LERAS, Docteur ès-sciences.
Դեղագործ Լերասի
ՖՕՍՖԱԹ ԴԷ ՖԵՐԸ

Այս դեղն արիւնն և ոսկրները վերանորոգելու և զօրացնելու համար գործածուած դեղօրիէից ամենաազդուն է։ Ոչ պնդուիւն է պատճառում, ոչ ստամոքսն է յոգնեցնում և ոչ էլ ատամներն է սևացնում, մինչ մեծ աղտոտութեամբ բժշկում է կանանց սպիտակ հոսումը, ստամոքսի ցաւը, ժպտունութիւնը, արեան սակաւութիւնը, մեավ բանիւ այն ամեն հիւանդութիւնները, որոնց ենթակայ են փափուկ կանայք և դեռահասները աղջիկները և մանուկները, երբ ժպտոյն, անարիւն, թուլամորթ և անախորժ են։

Ծախուում է Պարիզ, Վիվիէն փողոց № 8 և գլխաւոր դեղավաճառների մօտ։ Տ

(Մ.) գ 27—7

РОДИЛЬНЫЙ ПРІЮТЪ
акушерки
С. З. ХИЗАНОВОЙ
Сололаки. Садовая ул., д. № 42.

ԾՆՆԴԱՐԱՆ
ՄԱՆԿԱԲԱՐՁ
ՍՕՖԻԱ ԽԻԶԱՆԵԱՆԻ
Սօլօլակի, Սադովայա փողոց, տ. № 42.

Թէ ցերեկուայ և թէ գիշերուայ ամենայն ժամանակ՝ ընդունւում են յղիները, երկունքով բռնուածները (ծաւոլները) և ծննդականները, որոնք խնամւում են շարունակ մանկաբարձի հսկողութեան տակ. տրւում է նրանց նաև սպիտակեղէն և կերակուր։

Ծննդի և ծննդին հետևող շրջանի խնամատարութեան համար վճարում են 50 րուբլի (առանձին սենեակում) և 10-ից մինչև 30 րուբլի (ընդհանուր սենեակներում)։

Օրական 1-ից մինչև 3 րուբլի։

X—30

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ
երեւելութիւն «Թիֆլիս» կայարանում
Գնում է
Բաքուում, պօստային. 8 ժ. 49 վ. առ.
Բագու, ,, 10 ժ. 46 վ. եր.
Սուրամ, ապ. մաթ. գն. 3 ժ. 21 վ. ց.
Ազստաֆա, խառն գն. 8 ժ. 20 վ. առ.
Գալիս է
Բաքուից, պօստ. 10 ժ. 15 վ. եր.
Բագուից, » 8 ժ. 6 վ. առ.
Սուրամից, ապ. մաթ. 8 ժ. 24 վ. առ.
Ազստաֆայից, խ. գն. 8 ժ. 18 վ. եր.

ПАРФЮМЕРІЯ
ВЫСШАГО КАЧЕСТВА
А. СІУ и К°
МОСКВА.
НАХОДИТСЯ ВО ВСѢХЪ ГОРОДАХЪ РОССІИ.

(·M(50 20—

ՊՈՒՐ-ՎԻՆՈ

ԲԵՍՏՕՐԱՆ Գոլովինսկի պրօսպեկտի վրայ, իշխան Բագրատիոն Մուխրանսկու տանը (Թիֆլիսի Ծողովարանի տակ)։

Ձաշը ամսով, երէկոյ պեսոչիյ—12 ր., երէկոյ—18 ր., օղի, գինի և սուրճ հետը—առանձին և շատ ձեռնտու պայմաններով։ Կախեթու գինիները ամենալաւ ֆիրմաներից, 40 կոպէկից սկսած և աւելի։ Եւրոպական գինիները աւելի արժան են, քան ուրիշ տեղերը։ Եւրոպական կերակուրների հետ միաժամանակ պատրաստում են ասիական և ամեն տեսակ ԳՈՒՐԻՒԱԿԱՆ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐ, ինչպէս օրինակ, ԹՈՒՋՈՒՆՆԵՐԻՑ ՍՄՅԻՎի, ԽՄՈՐՉՕ և ՂՕՄԻՒՈՎ ՁՈՒԿԸ։ ԳՈՒՐԻԱԿԱՆ ԽՈՀԱՆՈՑԸ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ Է մասնաւորապէս այդ նպատակով ՕՁՈՒՐԳԵԹԻՑ բերել տուած ՄԻ ԿԻՆ։ Ղօմին ստացւում է Գուրիայից։ Բեստորանում կան առանձնասենեակներ, բիլլիարդներ ռուսական և ֆրանսիական։ ԲԵՍՏՕՐԱՆԻՆ ԿԻՑ ԿԱՆ 10 ՎԵՐԱՆՈՐԴԱԾ ԵԻ ԼԱՒ ԿԱՀԱԻՈՐԱԾ ՍԵՆԵԱԿ, 50 կոպէկից սկսած մինչև 2 ր. օրեկան, իսկ ամսով զիջում է լինում։ ԸՆԴՈՒՆԻՒՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՊԱՏՈՒԻԷՐՆԵՐ։ Մանաւորապէս կան պատուոյ կերակուրներ։

8—2

ԴՕԿՏՕՐ ԺԵՐԱՐԻ ԵՐԿԱԹ

ՌՈՒՍԻԱՑՈՒՄ ԹՈՂՅԱՏՐԱԾ

Այս երկաթեայ դարմանն թեթևակի լուծողական լինելու առաւելութիւնն ունի. Պարիզի բժշկական ձեմարանի հաշիւը ցոյց է տալիս, որ նա աշխուժութեամբ գործ է դրւում ջղային ջեղջղութիւնի, արեան նուազութեան կամ անչքհոյի դէմ։

Դեպօն գտնւում է Պարիզում, 8, rue Vivienne, և Ռուսիայի նշանաւոր դեղատներում։ 26—8

VÉRITABLE BÉNÉDICTINE
ԻՍԿԱԿԱՆ ԲԵՆԵԴԻԿՏԵԱՆ ԼԻԿԵՈՐ
Ֆրանսիայում Fécamp-ի արքայութեան
Գերազանց, կազդուրիչ, մարսողութեանը օգնող և ախորժակ զարթեցնող
ԲՈԼՈՐ ԼԻԿԵՈՐՆԵՐԻՑ ԱՄԵՆԱԼԱՒԸ.

VÉRITABLE LIQUEUR BÉNÉDICTINE
Marques déposées en France et à l'Etranger
Alexandre aîné

Ամեն անգամ պահանջել քաւանկիւնի թղթանիշը շիշի ներքևում՝ գլխաւոր տեսչի սեփականութեամբ։ Իսկական Բենեդիկտեան (Bénédictine) լիկեօրը գտնւում է բոլոր քաղաքներում՝ մթերքների, մրգեղէնի, գինու և այլն ամենալաւ վաճառանոցներում։ (Մ.) 18—5

ՐԺՇԿԱԿԱՆ ՄԻՍԱՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՍԱԼԻՑԱՆԻՑ ԷՋՄԻԱԾԻՆ
Նկարագիրը
ՈՒԽՏԱՒՈՐ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ
Քաղաքից-ֆոխտխուն-ննդրով
Գինն է 50 կոպէկ
Դիմել «Նոր-Դար»-ի խմբագրութեան։ (Ա.) Ռ—53

Ռուսիա բերելը և վաճառելը թոյլատրուած է Բժշկական Դեպարտամենտից.

ԹԽՏԵՆՈՒ ԲՈՅԼՉԱՄ ԹՕԿ. ԼԵՆԹԻԼԻ.
Արդուղարդի մէջոց հանոյ համար.

Դործ է ածւում երեսի և ձեռների մարմինը սպիտակացնելու համար։

Շատ կեղծումների պատճառով, խնդրում եմ ուշ դարձնել այստեղ տպագրած զգուշացուցիչ մարկի վրայ։

Պատրաստելու ձևը

Այս Բոլզամը պատրաստելու միջոցին գլխաւոր ուշադրութիւնը դարձրած է այն բանի վրայ, որ նրա բաղադրութիւնների մէջ բացառապէս մտնեն այնպիսի նիւթեր, որոնք վատ ներգործութիւն չտանեն մարմնի վրայ, և ընդ նմին բարերար և թարմացուցիչ ներգործութիւն անեն երեսի և ձեռների մարմնի վրայ։

Գինն է՝ մի սրուակը 1 ր. 65 կոպ. ԲԻՆԶՕԵՎԻ ՕՁԱՈ 35 կ. և 50 կոպ. մի կտորը. ՕՊՕ-ՊՕՄԱԴԸ (կօլդ-կրէմիկ սառուել) 1 րուբ.։

Ձանապարհածախսը՝ եւրոպական Ռուսիա—70 կոպ., ասիական—1 րուբ.։

Գլխաւոր պահեստն ամբողջ Ռուսիայի համար Վ. Սուրինի մօտ, Պետերբուրգում՝ Կօլօկօլնայա 18—19։

Գտնւում են Ռուսիայի բոլոր անուշաբոյր նիւթերի և դեղատնային մագազիններում և դեղատներում։

Թիֆլիսում վաճառւում է դեղատնային ապրանքների վաճառման Կովկասեան Ընկերութեան, Վ. Գրիմնակի, Գ. Ա. Պապովի, Մ. Մարտիրոսովի և Ա. Պապովի մօտ։

(M.) 31—2

Дозволено цензурою. Тифлисъ, 4-го Ноября 1888 г. Տպարան Կավկազ լրագրի գրատնեակի Типографія конторы газеты Кавказъ, Гор. пр., д. Читахова